Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 5

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 05 դեկտեմբերի 2016թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն բանկի Խորհրդի թիվ 50/05-25.10.16թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև ս.թ. նոյեմբերի 05-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 1,707,995 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 1,319,015 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 77.23%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր են ճանաչվել 2 քվեաթերթիկ 372 ձայնի իրավունքով՝ քվեարկության կանոնները խախտելու պատճառով:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի բաժնետոմսերի 13-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով բանկի կանոնադրական կապիտալը 4,631,332,500 ՀՀ դրամ հաստատելու մասին:
3. Բանկի Կանոնադրության փոփոխված տարբերակի վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցերի, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Առաջին հարց	կողմ	1,318,616 ձայն կամ մասնակիցների ձայների	99.970%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	27 ձայն կամ մասնակիցների ձայների	0.002%
	անվավեր	372 ձայն կամ մասնակիցների ձայների	0.028%
2. Երկրորդ հարց	կողմ	1,318,621 ձայն կամ մասնակիցների ձայների	99.970%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	22 ձայն կամ մասնակիցների ձայների	0.002%
	անվավեր	372 ձայն կամ մասնակիցների ձայների	0.028%
3. Երրորդ հարց	կողմ	1,318,616 ձայն կամ մասնակիցների ձայների	99.970%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	27 ձայն կամ մասնակիցների ձայների	0.002%
	անվավեր	372 ձայն կամ մասնակիցների ձայների	0.028%

Այսպիսով, ելնելով քվեարկության արդյունքներից.

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Հ. Եգորյան, Ե. Ալեքսանյան

2. Հաստատել բանկի բաժնետոմսերի 13-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով բանկի կանոնադրական կապիտալը 4,631,332,500 ՀՀ դրամ:

3. Հաստատել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Կանոնադրության լրամշակված տարբերակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա թվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Հ. Եգորյան

Ե. Ալեքսանյան